# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**11 հունվարի 2022 թվականի N 09-Ա**

**«ԲԱՐՁՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Բարձրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Հակոբյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

«Բարձրավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սառա Հակոբյանի առողջական խնդիրների պատճառով, 2022 թվականի հունվարի 10-ից՝ նրա անաշխատունակության մեջ գտնվելու ժամանակահատվածում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսուցչի օգնական Ժենյա Ղազարյանին:

11.01.2022

X

ՄԵԼՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELKSET 4108600096

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2022թ. հունվարի 11
ք. Կապան